

**ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԵՐԻ ԵՎ
ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՀՈՒՐԶ:
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԶ**

Հոդվածում ներկայացվում են անգլերեն լեզվի ուսուցման առաջնահերթ մեթոդները՝ սկսած սկսնակներից մինչև բանավոր մակարդակը: Հաշվի են առնված օտար լեզու սովորեցնելու թե՛ դասական և թե՛ արդի մեթոդները: Բերվում են կոնկրետ օրինակներ հայերենի և անգլերենի քերականական իրողությունների զուգահեռներով: Հոդվածում առկա է հեղինակի մանկավարժա-մեթոդական երկարամյա փորձը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ անգլերեն-հայերեն, մեթոդ, քերականություն, հմտություն, անհրաժեշտություն, դասական, ժամանակակից:

Արդի դարաշրջանում, երբ գիտության զարգացումը հասել է աննախադեպ վերելքի, երբ զարգանում են շուկայական հարաբերությունները, ընդլայնվում են քաղաքական և մշակութային շփումները աշխարհի տարբեր երկրների հետ, առանձնապես մեծանում է օտար լեզուների, հատկապես անգլերեն լեզվի դերը մեր կյանքում: Աշխարհում այսօր գործող 4000-5000 լեզուների մեջ անգլերենն իր տարածվածությամբ երկրորդ լեզուն է համարվում չինարենից հետո: Անգլերեն լեզվով, որպես մայրենի լեզու, խոսողների թիվը կազմում է մոտ 300 միլիոն մարդ, որոնց կարելի է հանդիպել գրեթե բոլոր մայրցամաքներում: Եթե նրանց ավելացնենք այն շրջանները, որտեղ անգլերենը համարվում է երկրորդ օտար լեզու, ապա կարող ենք ասել, որ անգլերեն խոսողները կազ-

մում են աշխարհի բնակչության շուրջ 1/6 մասը: Այս լեզվի նկատմամբ հետաքրքրությունն առանձնապես մեծացել է հատկապես, վերջին տարիներին: Այդ երկրների թվին է պատկանում և Հայաստանը: Շատ երկրներում անգլերենը դարձել է լրատվական միջոցների (թերթեր, ռադիո, հեռուստատեսություն) լեզու: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աշխարհում ռադիոհաղորդումների մոտ 60%-ը անգլերենով են: Այս լեզուն՝ որպես երկրորդ օտար լեզու, իր լայն կիրառությունն է գտել նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տեղական և կենտրոնական կառավարությունները, ավիացիան, կրթությունը, գիտությունը, արվեստը, առևտրային և արդյունաբերական կազմակերպությունները և այլն: Բոլորովին էլ պատահական չէ, որ ներկայումս դպրոցական և բուհական ծրագրերում օտար լեզուն, հատկապես անգլերենը, իր կայուն տեղն է գրավել և գնալով ուսումնական ծրագրերում ավելանում են նրան հատկացվող դասաժամերը: Այժմ օտար լեզուներ ուսումնասիրելու նպատակով սովորողների համար բացվել են լայն հնարավորություններ, այդ թվում՝ համալսարաններ, լեզվի ուսուցման կենտրոններ, արագացված դասընթացներ և այլն:

Նկատենք, որ օտար լեզու ուսումնասիրելը ոչ անգլախոս երկրներում, ինչպիսին է, օրինակ, Հայաստանը, մի ամբողջ գիտություն է: Սա շատ կարևոր հանգամանք է, որը ոչ մի դեպքում չի կարելի անտեսել, հատկապես դասագր-

քեր կազմելիս, քանի որ օտար լեզու ուսումնասիրելիս հարկավոր է ունենալ նախօրոք մշակված մեթոդական և քերականական ճիշտ համակարգ: Պատկերը էապես այլ է լեզվակիր երկրներում, որտեղ լեզվական միջավայրում օտար լեզու, այդ թվում՝ և անգլերեն, կարելի է սովորել նույնիսկ առանց դասագրքերի և ուսուցիչների, այսինքն՝ առօրյա կյանքում՝ անմիջական շփման միջոցով: Օտար լեզու դասավանդելը և առհասարակ դասավանդելը բարդ գործընթաց է, քանի որ ուսուցանելը լոկ մասնագիտություն չէ, այլ մի ամբողջ արվեստ: Դասապրոցեսում անհրաժեշտ է ոչ միայն լինել բարեխիղճ, եռանդուն մասնագետ, այլև ինչ-որ չափով դերասան, քանի որ այստեղ մենք գործ ունենք ոչ միայն բուն մասնագետի հետ, որ գիտելիքներ է հաղորդում, այլ նաև նրա անձի հետ: Հմուտ ուսուցիչը կամ մանկավարժը նա չէ, որ ունի միայն խոր գիտելիքներ, այլ նա, որ մանկավարժ լինելու հետ մեկտեղ նաև «դերասան» է, հատկապես, երբ խոսքը օտար լեզուների մասին է: Նկատենք, որ օտար լեզու դասավանդողի համար շատ կարևոր են ձայնային տվյալները, քանի որ լավ ձայնային տվյալները հնարավորություն են տալիս ուսուչի վրա բևեռելու սովորողների ուշադրությունը: Մյուս կողմից էլ այս հանգամանքը դասավանդողին հնարավորություն է տալիս հստակորեն արտաբերելու հնչյունները: Դասավանդող մանկավարժի համար պակաս կարևոր հանգամանք չէ նաև ժեստերի և դիմախաղի հարուստ համակարգ մշակելը, քանի որ այս կամ այն երևույթը կամ բառը բացատրելիս մենք հաճախ դիմում ենք ժեստերի կամ դիմախաղի օգնության: Հենց այստեղ է, որ դրսևորվում են դասավանդողի «դերասանական» ունակությունները: Օրինակ, երբ աշակերտին սովորեցնում ենք անգլերեն *to smile* «Ժպտալ» բայը, ապա լավ մտապահելու համար բառի իմաստը դասավանդողը այն կարող է ցույց տալ

իր սեփական դեմքի վրա՝ Ժպիտի տեսքով: Մտապահելու մեկ այլ արդյունավետ եղանակ է, երբ սովորողն ինքն է կատարում այս կամ այն գործողությունը: Իհարկե, մենք չենք սահմանափակվում միայն *to smile* բայի օրինակով: Այս եղանակով մասնագետը կարող է բացատրել նաև շատ ուրիշ օրինակներ էլ: Իհարկե, այս մեթոդի կիրառումը ավելի նպատակահարմար է սկսնակ սովորողների դեպքում, քանզի ճիշտ արտասանելը հույժ կարևոր է լեզուն կրողներին հեշտ հասկանալու համար:

Ուսումնական պրոցեսում կարող ենք հասնել առավել արդյունավետ արդյունքների, երբ սովորողների մոտ առաջացնում ենք հետաքրքրություն դասավանդվող առարկայի, իսկ մեր դեպքում՝ օտար լեզվի նկատմամբ: Նշենք, որ լավագույն միջոցներից մեկը սովորողների մոտ այս կամ այն գրքից հետաքրքիր հատված կամ բանաստեղծություն ընթերցելն է (իհարկե ուսուցանվող լեզվով), իսկ երբեմն էլ նույնիսկ զավեշտալի պատմություններ կամ անեկդոտներ պատմելը: Այս մեթոդը հաստատ կներգործի նույնիսկ նրանց վրա, ովքեր մինչ այդ շատ անտարբեր են եղել տվյալ լեզվի նկատմամբ: Նկատենք, որ ուսումնական պրոցեսը չափիտի լինի միայն զուտ դասապրոցես սովորողների համար, այլ այն պետք է դառնա հաճելի զբաղմունք լեզուն ուսումնասիրողի համար: Ընդհանրապես, դասավանդող բուն նյութը պետք է լինի շատ հետաքրքիր և արթնացնի ցանկություն և հետաքրքրություն տվյալ լեզվի նկատմամբ [Ստեփանյան Նաիրա, Նիկողոսյան Նաիրա, «Անգլերենի դասավանդման մի քանի հարցեր», էջ 84 // Foreign Language for Special Purpose. – Երևան, 2001. – Երևանի պետական համալսարան]: Այլ խոսքով՝ հանդիսանա խթանիչ միջոց: Այս առումով շատ օգտակար է դասարանում կամ լսարանում երբեմն տեսալսողական միջոցների կիրառումը, որոնք ոչ միայն հեշտացնում են սո-

վորելու պրոցեսը, այլև դասապրոցեսը դարձնում հաճելի: Էկրանի վրա այս կամ այն պատկերի ցուցադրումը հաստատ կօգնի ավելի լավ մտապահելու այս կամ այն բառը, իսկ ձայներիզներն էլ օգնում են հնչյունների ձիշտ արտասանությանը, և ինչու չէ, նաև նոր բառերի մտապահմանը:

Իսկ ի՞նչ լեզվով կազմակերպել օտար լեզվի դասը, այսինքն՝ միայն օտար լեզվով, թե երբեմն էլ դիմել մայրենի լեզվի օգնությանը, իսկ մեր դեպքում՝ հայոց լեզվի օգնությանը: Փորձը ցույց է տվել, որ շատ հարմար եղանակ է երկլեզվով դասավանդելը (հիմնականում սկսնակների դեպքում), այսինքն՝ ժամանակ առ ժամանակ դիմել թարգմանությանը, քանի որ գուտ օտար լեզվով դասը բացատրելիս կամ խոսելիս սովորողը շատ հաճախ կարող է չընկալել, հուսահատվել և ի վերջո հրաժարվել նոր լեզու սովորելուց: Մեր կարծիքով, այս մեթոդով էլ պետք է կառուցված լինեն դասագրքերը (հիմնականում սկսնակների համար), քանի որ հակառակ դեպքում օտար լեզուն իսկապես կդառնա «օտար» և տհաճ զբաղմունք սովորողի համար: Սակայն այստեղ հարկ է նշել, որ թարգմանությանը երբեմն պետք է մոտենալ որոշ վերապահումով, քանի որ մայրենի լեզվով մշտական թարգմանությունը հաճախ պասիվացնում է սովորողի մտածողությունը, քանի որ անմիջական թարգմանության միջոցով դասավանդողը հնարավորություն չի տալիս դիմացինին ինքնուրույն մտածելու: Ուրեմն ավելի ձիշտ կլինի, եթե մանկավարժը սովորողների մոտ զարգացնի բառիմաստը հասկանալ կամ կռահել կարողանալու ունակությունը, վերլուծական մտածողությունը [Е. И/ Пассов.- Основы коммуникативной методики обучения иноязычному обучению.-Москва, 1989, стр. 191.]: Ոչ պակաս կարևոր հանգամանք է նաև դասավանդվող նյութի ծավալը: Նկատենք, որ հաջողությունը դասի ծավալուն լինելու մեջ չէ և ոչ էլ

նոր բառերի մեծ քանակի, այլ՝ ձիշտ հակառակը. տեքստերը պետք է լինեն հետաքրքիր, ոչ շատ ծավալուն, իսկ նոր բառերի քանակն էլ ոչ չափազանց շատ:

Ընդհանրապես, դասապրոցեսը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ լսարանի, իսկ մեր դեպքում՝ հայերի ազգային առանձնահատկությունները, սովորությունները, պատմությունը, մշակույթը, հետաքրքրությունների ոլորտը: Մենք կունենանք առավել արդյունավետ արդյունքների եթե չանտեսենք այս փաստը: Օրինակ՝ վերջերս առավել շատ է խոսվում Լոնդոնից ոչ շատ հեռու գտնվող Stone Henge-ի և Հայաստանի Քարահունջ կոչվող վայրի մասին: Վերջինս հայտնի է «Ջորաջ քարեր» անվամբ: Լավ կլինի, որ մասնագետը անգլերեն լեզվի նկատմամբ սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնելու նպատակով անգլերեն լեզվով հանձնարարի արտադասարանական կամ արտալսարանային ինքնուրույն առաջադրանք՝ կապված վերոհիշյալ կառույցների հետ: Նյութը կարելի է նախ՝ թարգմանել, հետո՝ այն վերապատմել կամ քննարկել: Այս դեպքում տեքստում անծանոթ բառերի առկայությունը սովորողներին այնքան էլ չի վախեցնի, քանի որ նյութի հետաքրքիր լինելու փաստը սովորողներին կդարձնի ավելի համարձակ և կստիպի բառարաններից օգտվել ինքնուրույն, որը խիստ կարևոր է:

Խոսելով դասավանդման մեթոդի մասին՝ նկատենք, որ մասնագետը պետք է փայլուն տիրապետի խոսքային գործունեության բոլոր ասպեկտներին ու տեսակներին: Ուսուցիչը ուսուցիչ չէ, եթե նա չի կարողանում դասավանդել, չի տիրապետում այն միջոցներին, որոնք հնարավոր են դարձնում դասավանդելու պրոցեսը: Այդպիսի միջոց է մեթոդական մշակույթը, որի հիման վրա կառուցվում են հոգեբանական, մանկավարժական մշակույթները, լեզվին տիրապետելու ունակությունը: Ի վերջո այս բոլորը միասին կազմում են մասնագի-

տական (պրոֆեսիոնալ) մշակույթ [Вайс-бурд М. Л. “Методы обучения. Выбор за вами”//Иностранные языки в школе /համացանց, 2000., N2]:

Հարկ է նշել, որ գոյություն ունեն օտար լեզու դասավանդելու տարբեր մեթոդներ: Ճիշտ մեթոդի ընտրությունը հաջողության գրավականներից մեկն է, և դրանով է պայմանավորված ուսման պրոցեսի արդյունավետությունը: Ներկայումս առավել տարածված մեթոդ են դասական և հաղորդակցային մեթոդները: Դասական մեթոդի կիրառումը մեծ առավելություններ ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս լեզուն ուսումնասիրելու ամբողջովին, համակարգված: Ընդհանրապես դասական մեթոդը իր մեջ ներառում է լեզվի ուսումնասիրման չորս բաղադրատարրեր լսում, ընթերցում, գրավոր աշխատանք և բանավոր խոսք, և նպաստում է բանավոր ու գրավոր խոսքի զարգացմանը: Այս մեթոդը շատ հարմար է կիրառել բուհերում՝ հատկապես լեզվի մասնագիտական ֆակուլտետներում և դպրոցներում:

Համեմատաբար նոր մեթոդ է հաղորդակցային մեթոդը, որի հիմքում ընկած են բանավոր խոսքը և օտար լեզվով լսողական ընկալումը: Այս մեթոդի կիրառումը սովորողին թույլ է տալիս համեմատաբար կարճ ժամանակում, անգամ քիչ բառապաշարի դեպքում, ուժերը փորձել բանավոր շփման ժամանակ: Մեթոդի նպատակն է՝ ստեղծել արհեստականորեն լեզվական բնական միջավայր, որտեղ սովորողը կարող է իրեն ազատ զգալ՝ առանց կաշկանդվելու քերականական կանոններից ու դասագրքերից: Նկատենք, որ վերջերս մեծացել է նաև օտար լեզուն ուսումնասիրելու ինտենսիվ մեթոդի նկատմամբ հետաքրքրությունը: Այս մեթոդի կիրառումը սովորողներին հնարավորություն է տալիս սեղմ ժամկետներում տիրապետելու լեզվի առավել գործածական բառապաշարին և քերականական կառուցվածքներին: Սակայն օտար լեզու

սովորելու այս մեթոդն ավելի հարմար է օգտագործել, օրինակ, աշխատանքային գործուղումներ մեկնողներին, ինչպես նաև նրանց համար, ովքեր ժամանակի սղության պատճառով հնարավորություն չունեն լեզուն ամբողջովին ուսումնասիրելու, ինչպես, օրինակ, դասական մեթոդի դեպքում:

Ինչ վերաբերում է Հայաստանի պայմաններում օտար լեզու դասավանդելուն, ապա նշենք, որ մենք՝ հայերս, բավականին նպաստավոր պայմաններում ենք գտնվում: Այստեղ նկատի ունենք մեր ոսկեդենիկ հայոց լեզուն: Դեռ վաղ ժամանակներից հայտնի է, որ հայերը շատ հեշտ են օտար լեզու սովորում: Բելգիացի հայագետ Ֆելիքս Նևն ասում է, թե հայերը բնածին պոլիգլոտներ են, և դրա համար էլ Արևելքի դեսպանները եվրոպական երկրներում միշտ հայեր էին: Մեր մայրենին այնքան հարուստ հնչյունական և քերականական համակարգ ունի, որ այս հանգամանքը բավականին հեշտացնում է օտար լեզուն, իսկ տվյալ դեպքում՝ անգլերեն սովորելը: Հաճախ առանձին քերականական կառուցվածքներ բացատրելիս շատ արդյունավետ միջոց է համեմատական գուգահեռներ անցկացնել դասավանդվող օտար լեզվի և հայերենի միջև: Օրինակ, անգլերենի **to be (լինել)** բայը բացատրելիս, որին համապատասխանում են անգլերեն **am, is, are** օժանդակ բայերը, շատ հարմար է համեմատություն անցկացնել հայերեն **եմ, ես, է, ենք, եք, են** օժանդակ բայերի հետ: Օրինակ՝ անգլ.՝ Bess **is** in London now. Հայ.՝ Բեսը Լոնդոնում **է** հիմա: Մեր օրինակներում անգլերեն **is** օժանդակ բայը համապատասխանում է հայերենի **է** օժանդակ բային: Եվս մեկ այլ օրինակ՝ անգլ.՝ We **are** in the centre of the city. Հայ.՝ Մենք քաղաքի կենտրոնում ենք: Այստեղ անգլերեն **are**-ը համապատասխանում է հայերենի **ենք** օժանդակ բային:

Համեմատական մեթոդով կարող ենք բացատրել նաև քերականական ժամանակաձևեր, օրինակ, անգլերենի Present

Perfect և Past Perfect ժամանակաձևերը՝ նրանց համեմատելով հայերենի ներկա վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակաձևերի հետ: Հայ սովորողն անմիջապես կընկալի անգլերենի այս քերականական ժամանակաձևերը, քանի որ հայերենից նրան արդեն ծանոթ է վաղակատար ժամանակը: Երկու լեզուներում էլ ներկա վաղակատար ժամանակը կամ Present Perfect Tense-ը ցույց են տալիս խոսելու պահից առաջ ավարտված գործողություն, որն անմիջականորեն կապված է ներկա ժամանակի հետ: Օրինակ՝ անգլ. **I have already translated** the article. Հայ.՝ Ես արդեն **թարգմանել եմ** հոդվածը: Նույն համեմատական մեթոդով կարող ենք բացատրել անգլերենի Past Perfect Tense-ը և հայերենի անցյալ վաղակատար ժամանակաձևը: Այս դեպքում անգլերենին բնորոշ է **had + Participle II** կառուցվածքը Past Perfect-ում: Երկու լեզուներում էլ անցյալ վաղակատար ժամանակը կամ Past Perfect Tense-ը ցույց են տալիս անցյալում՝ մինչև նշված ժամանակը կամ պահը ավարտված գործողություն: Օրինակ՝ անգլ.՝ The student **had finished reading** the book by Sunday. Հայ. Ուսանողն ավարտել էր գրքի ընթերցումը մինչև կիրակի օրը: Այլ խոսքով՝ եթե սովորողը պարզ պատկերացնում է հայերենի ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևերը, ապա նրան հեշտ կլինի ընկալել անգլերենի համապատասխան Present Perfect և Past Perfect ժամանակաձևերը: Սա նշանակում է, որ գրագետ ձևով անգլերենը յուրացնելու համար նախ գրագիտություն է պետք մայրենի լեզվից:

Խոսելով մեթոդի կարևորության մասին՝ չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ միայն գիտելիքները չէ, որ զարգացնում և հարստացնում են մարդու ներաշխարհը, այսինքն՝ ուսումնական պրոցեսում կարևորը միայն լեզվական արդյունքները չեն, այլ նաև այն, որ

այդ գիտելիքների տիրապետումը նպաստում է մարդու՝ որպես անհատի ձևավորմանը: Այս առումով առանձնապես մեծ է օտար լեզվի, այդ թվում՝ և անգլերենի դերը: Ուրեմն, կարևորը ոչ միայն գործնական լեզվի տիրապետումն է, այլև այն ամենը, ինչը ներառում է օտարալեզու մշակույթը, օրինակ, արվեստ, գրականություն, պատմություն [Է. Ի. Пассов. “Воспитательный развивающий и познавательный потенциал”//Основы коммуникативной методики обучения иноязычному обучению.–Москва, 1989, стр. 218–219]: Այլ խոսքով՝ ուսումնական գործընթացն իր մեջ ներառում է նաև ճանաչողական մեծ ներուժ: Օրինակ, սովորողը ծանոթանում է տվյալ լեզվակիր երկրի մշակույթին, սովորություններին, պատմությանը, մյուս կողմից էլ լեզվի իմացությունը նպաստում է ժողովուրդների միջև ջերմ, բարեկամական հարաբերություններ ստեղծելուն: Իսկ այս հանգամանքը նշանակում է, որ օտար լեզվով ընտրված դասավանդվող նյութը պետք է լինի ճանաչողական բնույթի:

Օտար լեզվի գործնական պարապմունքների հաջողությունն ըստ հոգեբանների մեծապես կախված է նաև այն հանգամանքից, թե ինչ նպատակ է հետապնդում տվյալ գործունեությունը, այսինքն, եթե մենք դասը հանձնարարել ենք կարդալ կամ պատմել, ապա մենք պետք է սովորողներին բացատրենք տվյալ գործունեության նպատակը, իսկ տվյալ դեպքում՝ կարդալու կամ պատմելու նպատակը:

Ինչ խոսք, ինչպիսի մեթոդով էլ կամ դասագրքով էլ առաջնորդվի դասավանդող մանկավարժը, շատ կարևոր է, որ մասնագետը լինի հաճելի գրուցակից և գրուցընկեր իր լսարանի կամ դասարանի համար, որպեսզի սովորողն իրեն զուտ սովորող չգգա, որին պարտադրում են սովորել, այլ մասնագետին ընկալի որպես գրուցընկերոջ, որն իրենց փորձում է ուսուցանել օտար լեզու:

Իհարկե, ուսումնական պրոցեսը չի սահմանափակվում միայն վերոհիշյալ մեթոդներով: Գիտության և տեխնիկայի զարգացման հետ մեկտեղ մշակվում և երևան են գալիս օտար լեզուն ուսումնասիրելու ժամանակակից այլ մեթոդներ ևս: Գոյություն ունեն նաև լեզուն ուսումնասիրելու տեխնիկական միջոցներ: Սակայն դա քննարկման այլ թեմա է:

Հանրագումարի բերելով վերը ասվածը՝ նկատենք, որ եթե մենք ցանկանում ենք օտար լեզու դասավանդելիս հասնել լավագույն արդյունքների, ապա դասավանդող մասնավարժը, հիանալի մասնագետ լինելուց բացի, պետք է լավագույնս տիրապետի խոսքային գործունեության բոլոր ասպեկտներին և մեթոդական մշակույթին, քաջ ծանոթ լինի համընդհանուր պատմությանը, արվեստին, գրականությանը, լինի հաճելի գրուցընկեր, իսկ նրա կողմից

ընտրված նյութերն էլ պետք է լինեն հետաքրքիր, բովանդակալից, ոչ մեծ ծավալով, ունենան ճանաչողական բնույթ, քանի որ ուսումնական պրոցեսում կարևորը ոչ միայն լեզվական արդյունքներն են, գիտելիքները, այլև նաև այն, որ օտար լեզվի ուսուցումը սովորողին օգնում է հարստացնելու ներաշխարհը, զարգանալու, ծանոթանալու տվյալ երկրի մշակույթին, պատմությանը, սովորություններին և նպաստում երկրների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը: Ինչ խոսք, այս ամենի հետ մեկտեղ չպետք է մոռանալ նաև մայրենի լեզվի դերը, հատկապես ուսուցման սկզբնական շրջանում:

Վերոհիշյալ հոդվածը միայն մի փոքրիկ փորձ է՝ օտար լեզվի մասնագետին օգնելու արդյունավետորեն կազմակերպելու դասապրոցեսը:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 26.07.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանյան Նաիրա, Նիկողոսյան Նաիրա, Անգլերենի դասավանդման մի քանի հարցեր, //Foreign Language for Special Purposes., Երևան, 2001, էջ 83-88, Երևանի պետական համալսարան, 134 էջ:
2. Е. И. Пассов., Основы коммуникативной методики обучения иноязычному обучению.–Москва, 1989, стр. 276.
3. Вайсбурд М. Л., “Методы обучения.Выбор за вами”//Иностранные языки в школе.– 2000.– N2.
4. Geoffrey Broughton, Christopher Brumfit, Roger Flavell, Peter Hill and Anita Pincas.–Teaching English as a Second Language. – London, 1980. Pp. 248.

РАЗМЫШЛЕНИЯ О РОЛИ АНГЛИЙСКОГО КАК ИНОСТРАННОГО ЯЗЫКА И
НЕКОТОРЫХ МЕТОДИЧЕСКИХ ВОПРОСАХ ЕГО ПРЕПОДАВАНИЯ.
РОЛЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА В ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОМУ

АСМИК АБРААМЯН

*Национальная Академия Наук РА,
Международный научно образовательный центр,
преподаватель английского языка*

В статье представлены приоритетные методы обучения английскому языку—от начального до вербального уровня. Приняты во внимание как классические, так и современные методы обучения. Приведены конкретные примеры с их английскими и армянскими грамматическими параллелями. Статья основана на многолетнем педагогическом и методическом опыте автора.

REFLECTIONS ON THE ROLE OF ENGLISH AS A FOREIGN LANGUAGE AND
SEVERAL ISSUES ON ITS TEACHING METHODS. THE ROLE OF
THE ARMENIAN LANGUAGE IN TEACHING ENGLISH

HASMIK ABRAHAMYAN

*International Scientific–Educational Center of the National Academy
of Sciences of the Republic of Armenia,
Lecturer of English*

The paper covers the priority teaching methods of English– from beginners to the verbal level. Both the classical and modern teaching methods of foreign languages are taken into account. Specific examples with their English and Armenian grammatical parallels are given. The paper is based on years of pedagogical and methodological experience of the author.